

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-472-07.02.2020-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքում տոհմային կենդանի մանր եղջերավոր անասունների օտարումն ազատել ԱԱՀ-ից: Նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ առաջարկությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ տոհմային այծերի և ոչխարների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից, իսկ օտարումը՝ ոչ: Այս առումով, որպես նախագծի ընդունման նպատակ է դիտարկվում տեղական տոհմային տնտեսությունների զարգացմանն աջակցությունը, ներմուծման հետ հավասար պայմանների ապահովումը, որի արդյունքում, նախագծի ընդունումը կնպաստի, մասնավորապես, նորաստեղծ և գործող տոհմային տնտեսությունների կողմից արտադրվող տոհմային անասունների գնի նվազեցմանը, ինչը կնպաստի անասնապահության զարգացմանն ու Հայաստանի պարենային անվտանգության բարձրացմանը:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծի հեղինակի կողմից նմանօրինակ առաջարկություն ներկայացվել է նաև 2019 թվականին: Հեղինակի կողմից քննարկման ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում առաջարկվել էր Հայաստանի Հանրապետության տարածքում տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումն ազատել ԱԱՀ-ից: ՀՀ կառավարությունը 2019 թվականի ապրիլի 18-ի N 415-Լ որոշմամբ առաջարկության ընդունումը համարել է ոչ նպատակահարմար՝ ներկայացնելով մի շարք նկատառումներ և խնդիրներ: Այնուհետև, նախագիծը 2019 թվականի հունիսի 19-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Հայտնում ենք, որ նախկին առաջարկության վերաբերյալ ներկայացված նկատառումները և խնդիրները արդիական են նաև ներկայացված առաջարկության պարագայում, և այս առումով նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Որպես ընդհանուր նկատառում, հայտնում ենք, որ անուղղակի հարկերից ազատման արտոնությունների շրջանակի ընդլայնումը հակադրվում է ներկա փուլում իրականացվող՝ հայտարարված հարկային քաղաքականությանը, որի շրջանակներում նախատեսվում է՝

1) նախ, աստիճանաբար նվազեցնել ուղղակի հարկերի գծով հարկային բեռը և դրա հետևանքով առաջացող՝ պետական բյուջեի հարկային եկամուտների կորուստը որոշակիորեն փոխհատուցել անուղղակի հարկերի գծով հարկային բեռի բարձրացման հաշվին,

2) հարկային համակարգի հետագա բարեփոխումների շրջանակներում գնահատել գործող հարկային արտոնությունների արդյունավետությունը և կրճատել այն հարկային արտոնությունները, որոնք արդյունավետ չեն գնահատվի: Այս առումով, հատկանշական է հատկապես այն, որ քաղաքականության նշյալ ուղղությունը արտացոլվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային բարեփոխումների իրականացման հայեցակարգի նախագծում, որը ս. թ. փետրվարի 18-ին ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած քննարկման արդյունքում հավանության է արժանացել: Նշյալ հայեցակարգի նախագծով, մասնավորապես, սահմանվել է, որ առաջիկա տարիներին կարևորվելու է ԱԱՀ-ի գծով առկա հարկային արտոնությունները աստիճանաբար կրճատելու քաղաքականությունը: Մյուս կողմից մեծապես կարևորելով սահմանափակ բյուջետային հնարավորությունները պետական աջակցության ծրագրերի շրջանակներում առավելագույն հասցեականությամբ օգտագործելու նպատակադրումը՝ նշյալ փաստաթղթով ամրագրվել է, որ առաջիկայում քննարկման առարկա է դառնալու ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակը կրճատելու և փոխարենը հասարակության սոցիալապես անապահով խմբերին պետական բյուջեից հասցեական ձևով տրամադրվող աջակցության ծավալն ընդլայնելու հնարավորությունը՝ դրանով իսկ պետության աջակցությունը դարձնելով առավել թիրախային ու արդյունավետ:

2. Նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված՝ տոհմային մանր եղջերավոր անասունների օտարումն ԱԱՀ-ից ազատելու դեպքում այդ կենդանիների գների նվազելու դիտարկման կապակցությամբ, հայտնում ենք, որ ԱԱՀ-ի մասով արտոնությունների կիրառության նախորդ տարիների փորձը բազմիցս ապացուցել է, որ ԱԱՀ-ի արտոնությունների կիրառությունը երբեք ուղղակիորեն չի հանգեցնում ապրանքների գների՝ ԱԱՀ-ի դրույքաչափին համապատասխանող գումարի չափով նվազեցման: Նշյալ հանգամանքն ունի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Մասնավորապես, որպես օբյեկտիվ պատճառ, կարելի է նշել այն, որ ապրանքների իրացումն ԱԱՀ-ից ազատելը դեռևս չի նշանակում, որ տնտեսավարող սուբյեկտներն ազատվում են մատակարարներին ԱԱՀ վճարելու պարտավորություններից: Արդյունքում ԱԱՀ-ից ազատված գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները (տվյալ դեպքում, օրինակ, կենդանին աճեցնելու համար ձեռք բերված կերի

կամ էլ եկտորաէներգիայի համար վճարված ԱԱՀ-ի գումարները) արտոնության շահառու հանդիսացող տնտեսավարող սուբյեկտները ստիպված են լինում միացնել ապրանքների ձեռքբերման ծախսերին, ինչի արդյունքում ապրանքների գինն ԱԱՀ-ի դրույքաչափին համապատասխանող գումարի չափով չի կարող նվազել:

Սուբյեկտիվ պատճառները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ տնտեսավարող սուբյեկտները, որպես կանոն, ԱԱՀ-ից ազատելու արտոնությունն օգտագործում են որպես նախկինում ստացված շահույթներից ավելի մեծ շահույթներ ստանալու հնարավորություն՝ անփոփոխ թողնելով կամ ընդամենը շատ քիչ չափով նվազեցնելով ԱԱՀ-ից ազատված ապրանքի գինը: Այլ կերպ ասած՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կորցնում է իր հասցեականությունը և իրական շահառուների շահերին ծառայելու փոխարեն նպաստում է արտոնության կիրառության իրական շահառու չհամարվող այլ տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը: Արդյունքում, պետական բյուջեն կրում է չհիմնավորված հարկային ծախսեր: Այս առումով, ներկայացված առաջարկության ընդունման պարագայում այս ռիսկը չի կարող անտեսվել:

Տեղին ենք համարում նշել նաև, որ առաջարկության ընդունման դեպքում մանր եղջերավոր անասունների գների նվազման մանրամասն հաշվարկներ ներկայացված չեն: Բացի այդ, ներկայացված չէ նաև ներմուծվող և տեղում աճեցվող տոհմային մանր եղջերավոր անասունների գների վերաբերյալ տեղեկատվություն՝ հասկանալու համար, թե արդյոք առաջարկության ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետությունում աճեցվող անասունները կարող են գնային առումով մրցակցային առավելություններ ունենալ ներմուծվող տոհմային կենդանիների նկատմամբ: Նշյալ տեղեկատվությունը կարևորվում է այն պատճառով, որ տոհմային մանր եղջերավոր անասունների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից, հետևաբար, եթե Հայաստանի Հանրապետությունում աճեցվող տոհմային մանրեղջերավոր անասուններն առաջարկվող արտոնությունը տրամադրելուց հետո շարունակեն գնային առումով լինել ավելի թանկ, ապա ներկայացված առաջարկության ընդունումը հանգեցնելու է միայն պետական բյուջեի եկամուտների կորստի և իր առջև դրված նպատակին չի ծառայելու:

3. Բացի այդ, նախագծի ընդունման հիմնավորմամբ ներկայացված՝ առաջարկությանը տեղական տոհմային տնտեսությունների զարգացմանն աջակցելու և ներմուծման հետ հավասար պայմաններ ապահովելու հետ կապված դիտարկման վերաբերյալ հայտնում ենք, որ հասկանալի չէ, թե խոսքն ինչպիսի հավասար պայմաններ ապահովելու

մասին է, քանի որ ներմուծված տոհմային կենդանի մանր եղջերավոր անասունների օտարումը հարկվում է ԱԱՀ-ով:

4. Գտնում ենք, որ որպեսզի նախագիծը հիմնավորված համարվի, անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հաշվարկներ և ուսումնասիրություններ ևս: Մասնավորապես, ինչպես արդեն նշվեց, տոհմային մանր եղջերավոր անասունների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից: Նախագծով առաջարկվում է ԱԱՀ-ից ազատել նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց օտարումը: Արդյունքում ստացվելու է, որ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և իրացվող անասունների գները որևէ փուլում չեն ծանրաբեռնվելու ԱԱՀ-ով, իսկ երկրի ներսում աճեցվող անասունների գները, այդուհանդերձ, իրենց մեջ ներառելու են կենդանին աճեցնելու համար Հայաստանի Հանրապետությունում կատարվող ձեռքբերումների համար մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարներ: Այս առումով, կարծում ենք, որ նման ուսումնասիրությունների և հաշվարկների բացակայության պայմաններում նախագծի ընդունումը կարող է նախագծի առջև դրված նպատակին հակառակ ազդեցությունն ունենալ: Ավելին, գտնում ենք, որ մինչև այս առաջարկության հետագա քննարկումը անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել, թե Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը ԱԱՀ-ից ազատելուն ուղղված օրենսդրական առաջարկության ընդունումն ինչ արդյունքներ է թողել գյուղատնտեսության ոլորտի վրա՝ առհասարակ և Հայաստանի Հանրապետությունում տոհմային խոշոր եղջերավոր անասունների արտադրության ծավալների վրա՝ մասնավորապես: Գտնում ենք նաև, որ նշյալ ուսումնասիրությունները պետք է ուղղված լինեն նաև սույն գրությամբ ներկայացված ռիսկերը գնահատելուն:

5. Ներկայացված առաջարկությունը ենթադրում է ԱԱՀ-ից ազատման հարկային արտոնության տրամադրում ինչպես տոհմային մանր եղջերավոր անասուններ աճեցնողներին, այնպես էլ վերավաճառողներին: Այս առումով, նույնպես, գտնում ենք, որ ներկայացված առաջարկությունը խնդրահարույց է, քանի որ վերավաճառքով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները, որոնց առևտրային վերադիրներն ի դեպ հաճախ կարող են ավելի մեծ լինել, քան աճեցնողների եկամուտները, զբաղվում են սովորական առք ու վաճառքով, որոնց մասով ԱԱՀ-ից ազատման արտոնության տրամադրումը հիմնավորված չէ:

6. Առաջարկությունը խնդրահարույց է հարկերի վճարումից խուսափելու ռիսկերը կառավարելու և արդյունավետ հարկային վարչարարություն իրականացնելու առումներով: Մասնավորապես, առաջարկության ընդունման դեպքում կարող է ստացվել այնպես, որ տնտեսավարող սուբյեկտները տոհմային մանր եղջերավոր անասուն չհամարվող այլ կենդանիների օտարումը (որն ազատված չէ ԱԱՀ-ից) կարող են վերագրել տոհմային մանր եղջերավոր անասունների օտարմանը և այդպիսով խուսափել հարկերի վճարումից:

7. Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ գյուղատնտեսության ոլորտի համար գործող հարկային և մաքսային օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված է արտոնությունների շատ լայն շրջանակ: Ընդ որում, նշյալ արտոնություններից ամենահիմնականը թերևս համարվում է այն, որ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողներն ազատվում են շահութահարկի վճարումից իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

Բացի այդ, ըստ էության, հարկից ազատման արտոնություն է նախատեսված նաև ԱԱՀ-ի և շրջանառության հարկի մասով, քանի որ եթե տնտեսության այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները պետք է կամ համարվեն շրջանառության հարկ վճարող (ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարելու և հարկային մարմին համապատասխան հայտարարություն ներկայացնելու դեպքում), կամ եթե չեն համարվում շրջանառության հարկ վճարող, ապա ՀՀ հարկային օրենսգրքի ուժով համարվում են ԱԱՀ վճարող, ապա գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները մինչև իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը գերազանցելը կարող են միաժամանակ չլինել և՛ շրջանառության հարկ վճարող, և՛ ԱԱՀ վճարող:

Անփոփելով վերոգրյալը՝ ստացվում է, որ վերոնշյալ շեմը չգերազանցող չափով իրացման շրջանառություն ունեցող գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտները շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու դեպքում ազատվում են ձեռնարկատիրական եկամուտներից

հաշվարկվող բոլոր հարկերից, իսկ շրջանառության հարկի շեմը գերազանցած գյուղատնտեսական արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտները՝ շահութահարկից:

8. Հայտնում ենք նաև, որ յուրաքանչյուր նոր հարկային արտոնության տրամադրում ենթադրում է հարկային եկամուտների կորուստ, հետևաբար նաև՝ առողջապահության, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության, կրթության, բնապահպանության և այլ հանրագուտ ոլորտներում չկատարված բյուջետային ծախսեր: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պետության ծախսային քաղաքականության շրջանակներում պետական աջակցության բյուջետային գործիքակազմն ավելի հասցեական ու, հետևաբար նաև՝ ավելի արդյունավետ է, ակնհայտ է դառնում, որ հարկային արտոնությունների տրամադրումը պետական աջակցության լավագույն միջոցը չէ, քանի որ հարկային արտոնությունը դրա իրական հասցեատերերի համար որոշակի կոնկրետ արդյունք չերաշխավորելով հանդերձ՝ հանգեցնում է հարկային ծախսերի առաջացման՝ պետությանը զրկելով աջակցության ավելի հասցեական ծրագրեր իրականացնելու հնարավորությունից:

Այս առումով, հարկ է նկատել նաև (որի վերաբերյալ նշված է նաև նախագծի ընդունման հիմնավորման մեջ), որ գյուղատնտեսության արդիականացման ծրագրի շրջանակներում «Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» և «Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով պետական աջակցություն» միջոցառումների շրջանակներում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման համար 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված են համապատասխանաբար 364,125.0 հազար դրամ և 310,500.0 հազար դրամ գումար:

Այսինքն, ոլորտի զարգացման համար պետական բյուջեից արդեն իսկ տրամադրվում է համապատասխան աջակցություն: Հետևաբար, նախագծով, ըստ էության, առաջարկվում է միևնույն նպատակի իրականացման համար կիրառել բյուջետային աջակցության տարբեր գործիքներ:

Վերոգրյալի կապակցությամբ, նախ, գտնում ենք, որ միևնույն նպատակի իրականացման համար միաժամանակ երկու գործիքակազմի կիրառումը արդյունավետության և հասցեականության ապահովման տեսանկյուններից նպատակահարմար չէ:

Բացի այդ, կարելի է ենթադրել, որ առաջարկության ներկայացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեից ոլորտի զարգացման համար տրամադրվող աջակցությունը բավարար չէ կամ ոչ արդյունավետ է:

Այս առումով, հայտնում ենք, որ եթե պետության ծախսային քաղաքականության շրջանակներում ոլորտի զարգացման համար տրամադրվող աջակցությունը բավարար չէ, ապա առավել նպատակահարմար է քննարկել ոչ թե հարկային արտոնություններ տրամադրելու հնարավորությունները, այլ այդ աջակցության շրջանակն ընդլայնելու հնարավորությունները, հաշվի առնելով նաև այն, որ պետական աջակցության բյուջետային գործիքակազմն ավելի հասցեական ու, հետևաբար նաև՝ ավելի արդյունավետ է: Եթե պետական բյուջեից ոլորտի զարգացման համար տրամադրվող աջակցությունը արդյունավետ չէ, ապա նախ անհրաժեշտ է ուսումնասիրել և առանձնացնել հնարավոր ոչ արդյունավետ դրսևորումները, որից հետո քայլեր ձեռնարկել դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Անփոփելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ առաջարկության ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազեցման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված նախագծի ընդունումը համարում է ոչ նպատակահարմար և առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենսգրքի հոդվածը թողնել անփոփոխ: